իություն հայտնեց, որ Արգենտինայի հետ միջպետական հարաբերությունները բարձր մակարդակի վրա են գտնվում եւ արտացոլում են երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ կապերը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Արգենտինայի հայ համայնքի դերակատարությանը երկրի կյանքին՝ նշելով, որ արգենտինահայ համայնքը Սփյուռքի լավագույնս կազմակերպված հզոր համայնքներից է եւ սիրված ու հարգված է երկրում, որտեղ հայությունը շաղախված է մշակույթին եւ առհասարակ կյանքի բոլոր ոլորտներին: Նորին Սրբությունը մասնավորապես արգենտինահայերի մեջ ընդգծեց բարեսիրական ոգին. նրանք իրենց նվիրական պարտքն են համարում զորակցել ազգային կյանքին, հոգեւոր եւ մշակութային տարբեր հաստատություններին:

Իր հերթին Արգենտինայի դեսպանը շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ջերմ ընդունելության համար եւ վստահեցրեց, որ պիտի ջանա նպաստել երկու երկրների ու երկու ժողովուրդների միջեւ առկա բարեկամական հարաբերությունների առավել ամրապնդմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից շնորհավորական գիր է հղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին՝ Արցախի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Հայրապետական շնորհավորագրի մեջ մասնավորապես ասվում է.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ եւ շնորհավորում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի բարձր ու պատասխանատու պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Արցախահայության սերն ու վստահությունը Դուք արդարորեն վաստակեցիք տարիների Ձեր նվիրյալ աշխատանքով՝ ի խնդիր Արցախի զորացման, նրա ասպվածասեր ժողովրդի խաղաղ ու բարօր կեցության: Ձեր ղեկավարության ներքո իր նոր՝ ազատ ու անկախ կյանքը կերտող Արցախն ընթացավ զարգացման ուղիով, արձանագրվեցին մնայուն հաջողություններ տնտեսական կյանքում, Արցախի հերոսական բանակի զորացման, սահմանների ապահովության գործում, որոնք ամուր երաշխիք են առավել պայծառ ու լուսավոր գալիքի:

Վստահ ենք, որ հայրենասեր ու ազգասեր նույն ոգով եւ պետական գործունեության մեջ հարուստ փորձառությամբ շարունակելու եք Ձեր գովաբժան գործունեությունը՝ հա-

նուն մեր ժողովրդի նոր հաղթանակների ու ձեռքբերումների կերտման, Արցախի միջազգային ճանաչման ու անշրջելի առաջընթացի:

Մեր աղոթքն է, որ Տերը զորակից լինի Ձեզ՝ Ձեր հայրենանվեր առաքելության մեջ, պարգևի քաջառողջություն եւ նորանոր հաջողություններ՝ ի բարօրություն Արցախ աշխարհի եւ հավատավոր արցախահայության»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ շքանշանի հանձնման արարողություն: Ս. Պատարագի ավարտին Միածնաէջ Մայր Տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի արժանացրեց ամերիկաբնակ բարերար Նուբար Աֆեյանին՝ ի գնահատություն ազգային-եկեղեցական կյանքում իր կարեւոր եւ օգտակար հանձնառությունների:

Մինչ շքանշանի հանձնումը Վեհափառ Հայրապետն անդրադարձավ մեծարյալի ազգօգուտ եւ եկեղեցանվեր գործունեությանը: Նորին Սրբությունը բարձր գնահատեց տիար Աֆեյանի հավատարմությունն ու սերը Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ՝ նշելով վերջինիս նշանակալի մասնակցությունը եկեղեցաշինության աշխատանքներում, ի մասնավորի Տաթեւի համալիրի վերանորոգման նվիրական գործին: Գարեգին Բ. Հայրապետն ընդգծեց նաեւ տիար Աֆեյանի կարեւոր ներդրումն Արցախի ժողովրդի բարօր կյանքի շինության գործում: Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով նվիրյալ հայորդուն, վերջինիս կուրծքը զարդարեց Հայոց Եկեղեցու պատվո բարձրագույն շքանշանով:

Ս. Պատարագին եւ շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին նաեւ ազգային բարերարներ տեր եւ տիկին Գառնիկ եւ Անի Յակոբյանները, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ տիար Ռուբեն Վարդանյանը, տիար Կարո Արմենը, ինչպես նաեւ բազում հրավիրյալներ եւ ուխտավորներ:

Հանդիսավոր արարողությունից հետո Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ հրավիրյալները վերստին շնորհավորեցին տիար Աֆեյանին՝ ծննդյան 50-րդ տարեդարձի եւ Հայոց Եկեղեցու բարձրագույն պարգեւին արժանանալու առիթով:

Բարերարներն ու հյուրերը նաեւ շրջեցին Մայր Աթոռում՝ ծանոթանալով ամենայն հայոց հոգեւոր կենտրոնի բարեկարգման հսկայածավալ աշխատանքներին, եղան «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձապանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ